



Վերահստեգրման հարցերով պետական
նախարարի աշխատակազմ

Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման գործնական պլանի կատարման հաշվետվություն

2009 թվականի մայիս - դեկտեմբեր



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

Հրատարակությունը պատրաստվել է Վրաստանի ՄԱԿ-ի ասոցիացիայի «Ազգային ինտեգրման և հանդուրժողականության ծրագրի» շրջանակներում, ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ

2008 թվականի ամռանը վերաինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմում ստեղծվեց երկու վարչություն՝ ազգային-էթնիկական փոքրամասնությունների և քաղաքացիական ինտեգրման հարցերով: Պետք է նշել, որ այս երկու վարչությունները կազմված են Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներից (ադրբեջանցի, հայ և չեչեն):

Մինչև այս վարչությունների ստեղծումը արդեն գործում էր նախագահին կից գոյություն ունեցող ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային խորհուրդը, որը աշխատում էր «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի» և հնգամյա գործնական պլանի մշակման վրա:

Աշխատակազմի գործունեությունը ակտիվացնելու և իրավասությունը բարձրացնելու նպատակով պլանավորվել են աշխատակազմի աշխատակիցների այցեր ազգային փոքրամասնություններով խիտ բնակեցված տարածաշրջաններ (Քվեմո Քարթլի և Շիդա Քարթլիի Կասպիի շրջան, որտեղ հոծ բնակվում են ադրբեջանցիներ, Սամցխե-Ջավախեթի և Կախեթի տարածաշրջաններ, որտեղ նույնպես քիստերի, օսերի, ադրբեջանցիների, հայերի, ասորիների, լեզգիների, ուդեների, գնչուների բնակավայրեր են): Տարածաշրջաններ այցերի ժամանակ տեղի ունեցան հանդիպումներ ինչպես ինքնակառավարման ներկայացուցիչների, այնպես էլ՝ տեղական բնակչության հետ: Այս բազմաթիվ հանդիպումների ժամանակ մենք ստացանք տեղեկատվություն առկա իրավիճակի մասին, ինչը էականորեն նպաստեց մեր մասնակցությանը հայեցակարգի մշակման գործընթացին:

Նախագահին կից գործող խորհրդի հետ համագործակցությամբ, «Ներողամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգը և գործնական պլանը» հաստատվեց Վրաստանի կառավարության 2009 թվականի մայիսի 8-ի №348 կարգադրությամբ: Այս հայեցակարգի համաձայն, մեր աշխատակազմին հանձնարարվեց մշակել և համակարգել քաղաքականության, ինչպես նաև ամեն տարվա դեկտեմբեր ամսին Վրաստանի կառավարության և նախագահին կից գործող խորհրդի առջև հաշվետվության ներկայացում:

Ընդունված հայեցակարգի և գործնական պլանի համակարգային իրականացման նպատակով, վերամիավորման հարցերով պետական նախարարի 2009 թվականի հուլիսի 3-ի №14 հրամանի հիման վրա, ստեղծվեց պետական միջգերատեսչական հանձնաժողով: Այս հանձնաժողովի կազմի մեջ մտան ինչպես մեր աշխատակազմի պատասխանատու աշխատակիցներ, այնպես էլ համապատասխան պետական գերատեսչությունների և կազմակերպությունների ներկայացուցիչներ: Հանձնաժողովը արդյունավետ կերպով համագործակցում է Վրաստանի խորհրդարանի համապատասխան կոմիտեների, ժողովրդական պաշտպանի աշխատակազմի, ոչ կառավարական և միջազգային կազմակերպությունների հետ:

Միևնույն ժամանակ, մեր որոշմամբ, Սամցխե-Ջավախեթիում և Քվեմո Քարթլիում նշանակվեցին պետական նախարարի ներկայացուցիչներ:

Ընթացիկ տարվա ընթացքում մեր աշխատակազմի ներկայացուցիչները իրականացրեցին շուրջ 60 այց Վրաստանի տարածաշրջաններ: Տեղերում ստացված լրատվությունը, հետագա արձագանքի նպատակով, աշխատակազմը փոխանցում էր բոլոր այն շահագրգիռ գերատեսչություններին, որոնք ընդրկված են գործնական պլանի կատարման գործընթացում: Գոհունակությամբ պետք է նշել, որ համապատասխան գերատեսչությունները ժամանակին էին արձագանքում մեր դիմումներին գոյություն ունեցող հիմնախնդիրները լուծելու համար:

Որոշ հիմնախնդիրներ կարգավորելու համար մեր գերատեսչությունը դիմում էր միջազգային կազմակերպություններին կամ դոնորներին: Օրինակ, մեր երաշխավորության հիման վրա Ճապոնիայի դեսպանությունը ֆինանսավորեց Մառնեուլի շրջանի ադրբեջանական դպրոցի շենքի վերանորոգումը, իսկ Ախալքալաքի հայկական և Կախեթիում Օկտոբերի գյուղի ուղիական դպրոցների շենքերի վերանորոգման հարցը նրանց կողմից լրացուցիչ քննարկման գործընթացում է:

Քուրդ-եզդիների խնդրանքի հիման վրա, 2009 թվականի դեկտեմբերի 15-ի կառավարության նիստում ընդունվեց որոշում խորհրդանշային գնով մեկ լարիով նրանց վաճառել 1600 քառ. մետր հողատարածք մշակութային-լուսավորական կենտրոն կառուցելու համար: Նմանապես Պանկիսի կիրճի բնակչության խնդրանքով վերաինտեգրման հարցերով պետական նախարարի աշխատակազմի միջնորդությամբ 2010 թվականի հունվարին բացվում է Պանկիսի կիրճի պատմության մեջ առաջին ազգագրական թանգարանը:

Մեր աշխատակազմի գործունեության կարևոր ուղղություններից մեկն է ուշադրության

արժանացնել օս ազգաբնակչությամբ բնակեցված գյուղերը , այդ պատճառով էլ իրականացվեցին բազմաթիվ այցեր տարածաշրջաններ անցյալ տարվա պատերազմի և ետպատերազմյան ժամանակաշրջանում: Օս բնակչության հետ բազմաթիվ հանդիպումների նպատակն էր անմիջականորեն տեղերում բացահայտել որքանով խաղաղ իրավիճակ է և արդյոք վրացիների և օսերի միջև գոյություն ունի հարաբերությունների սրում: Չնայած երկրում զարգացած ողբերգական իրադարձություններին՝ այնուամենայնիվ տեղացի օս և վրացի բնակչության միջև հակասություն տեղի չի ունենում: Անիրաժեշտ է նշել օսերի արտագաղթի մասին: Օսերի արտագաղթը Վրաստանից սկսվել է դեռևս 1990-ական թվականներին և շարունակվում էր մինչև 2008-ը: Վերջին ժամանակաշրջանի օսերի արտագաղթի հիմնական պատճառն բաժանված ընտանիքները միավորելու ցանկությունն է, քանզի ընտանիքների երիտասարդ անդամները դեռևս վաղ տարիներին տեղափոխվեցին բնակվելու Հյուսիսային Օսեթիա: Հիմնականում արտագաղթը վերաբերեց Ախմետայի և Լագոդեխի շրջանների գյուղերին (Դումաստուրի, Քվեմո Խալաձանի, Օինուբանի, Քորեթի, Կուծախտա, Փիչխովանի, Ախշնիի դաշտավայրեր և Արափշերոնի): Խիտ բնակեցված օսական բնակչության վրա պարբերաբար ուշադրությունը ապագայում էլ կշարունակվի:

Մեր գերատեսչությունը առանձնահատուկ ուշադրություն է հատկացնում և օժանդակում է երկրում բնակվող փոքր ազգային խմբերի (ուղեներ, լեզգիներ, քիստեր, գնչուներ, ասորիներ, քուրդ-եզդիներ և այլն) ինքնատիպության պահպանմանը, որպեսզի տեղի չունենա նրանց ասիմիլյացիա:

Այս հաշվետվությունում առանձնահատուկ չենք շոշափում տեղահանված մեսիեթցիների թեման, որովհետև նրանց բնակեցման գործընթացը դեռևս չի սկսվել: Չնայած այն բանին, որ նրանք մեր երկրում ազգային փոքրամասնություն չեն ներկայացնում , մեր աշխատակազմը պլանավորում է լուրջ աշխատանք անցկացնել, որպեսզի հետագայում օժանդակի նրանց հարմարվելու և ինտեգրման գործընթացին:

Ոչ նվազ կարևոր է Հյուսիսային Կովկասի ժողովուրդների հետ պատմական հարաբերությունների վերականգնումը, ինչը կենսականորեն կարևոր է մեր երկրի խաղաղ զարգացման համար: Այս գործընթացում ընդգրկված է մեր աշխատակազմը, որը «Կովկասի հիմնադրամ»-ի հետ ակտիվ համագործակցությամբ ձգտում է նրանց հետ կապեր հաստատել և խորացնել:

Երկրի տարածաշրջաններ այցերի ժամանակ բացահայտվեց, որ պետական լեզվի չիմացության պատճառով ոչ վրացի տեղական բնակչությունը դեռևս շարունակում է մասլ լրատվական վակուումում և նվազ գիտի Վրաստանում զարգացող իրադարձությունների, ազգային/ էթնիկական փոքրամասնությունների նկատմամբ կատարված օրենսդրական կամ այլ կարգի փոփոխությունների մասին: Տեղական բնակչության շահերից ելնելով՝ մեր աշխատակազմի նախաձեռնությամբ Հայեցակարգը և Գործնական պլանը թարգմանվեց աղբրեջանական և հայկական լեզուներով ԱՄՄ-ի միջազգային զարգացման գործակալության ծրագրի ֆինանսական աջակցությամբ: Այս թարգմանված փաստաթղթերը արդեն ներկայացվել են Քվեմո Քարթլիի և Կախեթի տարածաշրջաններում: Նման շնորհանդեսների անցկացում պլանավորվում է նաև Մամգիլե-Ջավախեթիում և Շիդա Քարթլիում:

Մեր ուշադրությունից դուրս չի մնացել Մառնեուլի և Բուխիսի մունիցիպալիտետներում բնակեցված Կողորի և Լիախվիի կիրճերից բռնի կերպով տեղաշարժված անձանց իրավիճակը, որպեսզի անցավագին իրականացվեր նրանց ինտեգրման գործընթացը:

Աշխատակազմը ակտիվ մասնակցություն է ունենում ազգային փոքրամասնությունների կողմից կազմակերպված տարբեր միջոցառումներին, իսկ մեր նախաձեռնությամբ և Քվեմո Քարթլիի նահանգապետի հետ համագործակցությամբ մայիսին անցկացվեց Աղբրեջանի և Վրաստանի հանրապետությունների անկախության օրերին նվիրված համատեղ միջոցառում:

Իշխանության կողմից նաև լուրջ ուշադրություն են պահանջում մեր երկրում ներկայացված ավանդական կրոնական դավանանքները. մենք հաճախ հանդիպում ենք նրանց ներկայացուցիչների հետ: Այս հանդիպումների ժամանակ պարզվեց գլխավոր հիմնախնդիրը նրանք չեն համաձայնում 2006 թվականին Վրաստանի քաղաքացիական Օրենսդրությունում մտցված փոփոխությունների հետ, որոնց համաձայն ավանդական կրոնական դավանանքները գրանցվում են որպես ոչ կառավարական կազմակերպություններ: Իսկ նրանք պահանջում են, որ գրանցվեն որպես հանրային իրավունքի իրավաբանական անձինք:

Այդ կապակցությամբ մենք մշտական հանդիպումներ ենք վարում ինչպես Համայն Վրաստանի կաթողիկոս-պատրիարքի, այնպես էլ արդարադատության նախարարության և ավանդական

կրոնական դավանանքների ղեկավարների հետ, որպեսզի գտնվեն կարգավիճակ շնորհելու հետ կապված հավասարակշռված և փոխզիջումաբաշխյալ իրավաբանական ձևակերպումներ:

Մեր աշխատակազմը սերտ համագործակցում է դիվանագիտական ներկայացուցչությունների հետ, իսկ առաջին հերթին Ադրբեջանի և Հայաստանի դեսպանությունների, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

Դոնորների աջակցությամբ, միջգերատեսչական հանձնաժողովի անդամների համար անցկացվեց աշխատանքային հանդիպում Թբիլիսիում և երկու արտագնա սեմինար (Գուդաուրիում և Բագալեթիում), որոնց մասնակցեցին նաև ժողովրդական պաշտպանի աշխատակազմի և մեր թեմատիկայով հետաքրքրվող ոչ կառավարական կազմակերպությունների ներկայացուցիչները: Գործարար փոխհամագործակցությունը միջազգային կազմակերպությունների և նրանց ծրագրերի, դոնորների և դիվանագիտական ներկայացուցչությունների հետ ապագայում ևս կշարունակվի:

Այս ժամանակաշրջանում արդեն անցկացված հանդիպումները, գործարար այցելությունները և կատարված աշխատանքների վերլուծությունը պարզորոշ ցույց տվեցին Վրաստանի կառավարության կողմից վերցրած կուրսի ճշտությունը և արդյունավետությունը, սակայն միաժամանակ բացահայտեցին հիմնախնդիրներ, որոնք հետագայում պահանջում են իշխանության լրացուցիչ ուշադրությունը.

- պետական լեզվի չիմացություն,
- լրատվության պակաս,
- չվերանորոգված հանրային դպրոցներ,
- ոչ վրացական դպրոցներում որակյալ մանկավարժական կադրերի պակաս,
- գյուղական ճանապարհներ,
- ջրամատակարարման հիմնախնդիր,
- գյուղերից երիտասարդության արտագաղթ:

Պետական նախարարի աշխատակազմը շարունակում է աշխատանքը տարբեր նախագծերի վրա, որոնք իրենց ներդրումը կունենան այս հիմնախնդիրների կարգավորման գործում: Մենք առանձնահատուկ ուշադրություն ենք դարձնում տարածաշրջանում բնակվող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ երիտասարդությանը: Այս ուղղությամբ մշակել ենք և տարածել հարցաթերթիկ ադրբեջաներեն և հայերեն լեզուներով: Հարցաթերթիկի նպատակն է բացահայտել երիտասարդ սերնդի օրենսդրական բազայի իմացության մակարդակը և դրա կիրառումը իր հնարավորությունները և հետաքրքրությունները բավարարելու համար: Ստացած արդյունքների հիման վրա պլանավորում ենք ստեղծել ֆոկուս-խմբեր և անցկացնել տարբեր թեմային-սեմինարներ հրավիրված փորձագետների մասնակցությամբ: Հուսանք, որ դա կլինի նրանց վրացական հասարակությանը ինտեգրվելուն նպաստող միջոցներից մեկը:

«Ներդրամտության և քաղաքացիական ինտեգրման ազգային հայեցակարգի և գործնական պլանի» իրականացմանը ընդգրկված պետական հիմնարկությունների կողմից 2009 թվականի մայիսից դեկտեմբեր ներառյալ ժամանակաշրջանում իրականացված աշխատանքների մասին մանրամասն հաշվետվություն ներկայացված է առաջադրված բրոշյուրում:

2009 թվականին ինչպես մեր գերատեսչության, այնպես էլ այլ պետական հիմնարկությունների, տեղական ինքնակառավարման և կառավարման մարմինների կողմից անցկացված գործունեության կոմպլեքսային վերլուծության հիման վրա գտնում ենք, որ անհրաժեշտ է հնգամյա գործնական պլանից 2010 թվականի համար պատրաստել կոնկրետ և մանրամասն պլան: Նման, ավելի մշակված և փոխադարձաբար համակարգված տարեկան պլանի կազմում-մշակումը կբացահայտի ինչպես արդեն կատարված աշխատանքի ուժեղ և թույլ կողմերը, այնպես էլ կցուցադրի անհրաժեշտության դեպքում գործնական պլանում փոփոխություններ մտցնելու հնարավորությունը:

Թեմուրի Յակոբաշվիլի

փոխվարչապետ Վրաստանի ռեինտեգրման հարցերով նախարար

(Հաշվետվությունը հաստատված է Կառավարության նիստում 29.12.2009; Արձանագրություն №43)

**Հաշվետվություն
2009 թվականի մայիս-դեկտեմբերի**

**ՆԵՐՈՂԱՄՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԼԱՆՈՎ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Կրթություն և պետական լեզու

ԽՆԴԻՐ N°1	Ծրագրի անվանում /միջոցառում		Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ
Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար նախադպրոցական կրթության մատչելիության ապահովում	1.1	Ազգային փոքրամասնությունների լուսավորական կոդեքսներին կողմնորոշված նախադպրոցական ուսուսմանական ծրագրերի պատրաստում և փորձարկում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014թթ..
իրականացում	2009 թվականի մարտի 31-ին Վրաստանի կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվեց «Վրաց լեզվի ծրագիրը»: 2009 թվականին նախարարությունը իրականացնում էր «Նախադպրոցական կրթության աստիճանին վրաց լեզվի ուսուցման աջակցություն ոչ վրացալեզու տարածաշրջաններում» ենթածրագիրը: Ենթածրագրի նպատակն է ոչ վրացալեզու տարածաշրջաններում վրաց լեզվի իմացության մակարդակի բարձրացում, նախադպրոցական տարիքում երեխաների համար որակյալ կրթական ծրագրեր մատակարարելու ուղիով: Ենթածրագրի շրջանակներում Քվեմո Քարթլիի և Սամցխե Ջավախեթի տարածաշրջաններում ընտրվել է 6 հանրային դպրոց (Դմանխի 3-րդ հանրային դպրոցը, Բուխիսի շրջանի Նախիդուրի գյուղի հանրային դպրոցը, Մառնեուլի N°6 հանրային դպրոցը, Նինոծմինդայի N°4 հանրային դպրոցը, Ախալքալաքի N°2 հանրային դպրոցը, Ախալցխի N°1 հանրային դպրոցը), որոնց բազայի վրա ստեղծվեցին նախադպրոցական կրթության կենտրոններ: Գործադրվում է փորձագետների կողմից ընտրված նախադպրոցական լուսավորության ծրագիրը, որը հիմնվում է վաղ տարիքում վրացերենի՝ որպես երկրորդ լեզու սովորելու սկզբունքների վրա և դրա հետ միասին նախատեսում է նախադպրոցական հասակի երեխաների մտածողաճանաչողական, սոցիալ-զգայական զարգացում:			2009 թվականի դեկտեմբերը ներառյալ
	1.2	Այն տարածաշրջաններում, որտեղ խիտ բնակվում են ազգային փոքրամասնություններ, դպրոցական պատրաստության մակարդակի բարձրացման նպատակով հատուկ ծրագրի մշակում: Ծնողների իրազեկվածության աճ նախադպրոցական կրթության և կոնկրետ ծրագրերի մասին:	Վաղ տարիքի երեխայի մասին հոգաձույթյան խորհրդարանային դաշինք, Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, տեղական ինքնակառավարում, ազգային ուսուսմանական պլանների և գնահատումների կենտրոն	2009-2014թթ..

<p>իրականացում</p>	<p>Վրաստանի խորհրդարանին կից գործող վաղ տարիքի երեխաների զարգացման դաշինքի 2007-2009 թվականների ազգային ռազմավարական գործնական պլանի, №5 գործնական ռազմավարության համաձայն նախատեսված է «Ընտանիքների և հասարակության իմացության աճ, նրանց վերաբերմունքի և գործնական ունակությունների բարելավում վաղ տարիքի երեխաների զարգացման հարցերում»: Ռազմավարության շրջանակներում նախատեսված են ծնողների համար լրատվական-լուսավորական նյութերի պատրաստում վաղ տարիքի երեխաների զարգացման և դպրոցական պատրաստվածության հարցերով, ինչպես նաև՝ այս նյութերի տարածում հասարակությունում: Ռազմավարությունը նախատեսում է Վրաստանում բնակվող ազգային փոքրամասնությունների համար ծրագրի մշակում, նյութի հարմարեցում, թարգմանություն և տարածում, որպեսզի այն մատչելի դառնա մեր երկրի ողջ բնակչության համար:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
<p>ԽՆԴԻԸ №2</p>				
<p>Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների միջնակարգ կրթություն ստանալուն աջակցություն</p>	<p>2.1</p>	<p>Ազգային ուսումնական պլանի թարգմանություն և արմատավորման թրեյնինգների անցկացում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն</p>	<p>2009թ.</p>
<p>իրականացում</p>	<p>“Դասագրքերի թարգմանության նախագծի» առաջին փուլում թարգմանվեցին ոչ վրացալեզու դպրոցների համար դասագրքեր ռուսական, հայկական, ադրբեջանական, օսական և արխազական լեզուներով: Ապահովվեց թարգմանված դասագրքերի փորձարկում 10 ադրբեջանալեզու, 10 հայալեզու և 10 ռուսալեզու դպրոցներում: 2009 թվականին նշված նախագծի շրջանակներում ապահովվեց III, IX և XII դասարանների 51 դասագրքերի թարգմանությունը:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
	<p>2.2</p>	<p>Ազգային փոքրամասնությունների լեզուներով դպրոցներում ուսուցման լեզվին համապատասխան դասագրքերի թարգմանություն</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն</p>	<p>2009-2014թթ..</p>
<p>իրականացում</p>	<p>2009-2010թթ.. ուսումնական տարում Վրաստանի ոչ վրացալեզու հանրային դպրոցների 6025 իններորդ դասարանցի ապահովվեց Վրաստանի պատմության, աշխարհագրության և քաղաքացիական կրթության դասագրքերով նրանց մայրենի լեզուներով ռուսերեն, հայերեն և ադրբեջաներեն:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
	<p>2.3</p>	<p>Նպատակային օգնություն բարեփոխման միջոցառումների իրականացման գործում՝ ազգային փոքրամասնությունների դպրոցների համար, համապատասխան ծրագրերի մշակում և արմատավորում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2009-2014թթ..</p>

իրականացում	<p>2009 թվականին նախարարի հրամանով հաստատվեց «Ոչ վրացալեզու սեկտորների աշակերտների դասագրքերի մատչելիության բարելավման ենթածրագիրը»:</p> <p>2009 թվականի վերջին ապահովված կլինի Սամցխե-Ջավախեթի տարածաշրջանի 23 ոչ վրացալեզու դպրոցների, Քվեմո Քարթլիի տարածաշրջանի 12 ոչ վրացալեզու դպրոցների, Թբիլիսիի 12 ոչ վրացալեզու դպրոցների, Կախեթի տարածաշրջանի 7 ոչ վրացալեզու դպրոցների, ինչպես նաև Գուրիայի, Շիդա Քարթլիի և Իմերեթիի երկրամասերում մեկական ոչ վրացալեզու դպրոցի վերակենդանացում:</p>		2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	2.4	<p>Բազմալեզու ուսուցման քաղաքականության կատարելագործում, փորձարկում և արմատավորում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն</p>	2009-2014թթ..
իրականացում	<p>2009 թվականի մարտի 31-ին Վրաստանի կրթության և գիտության նախարարի հրամանով հաստատվեց «Բազմալեզու ուսուցման աջակցության ծրագիրը»: Ծրագրի շրջանակներում ապահովվեց բազմալեզու կրթության դրույթների պատրաստում: ԵԱՀԿ-ի փորձագետների օգնությամբ 2009 թվականի օգոստոս սեպտեմբերին նախարարության բազմալեզու կրթության աշխատանքային խմբի անդամներին անցկացվեց 4 թրեյնինգ: Ծրագրի շրջանակներում ընտրվեց 10 տեղական մարզիչ, որոնց մասնագիտական թրեյնինգը ապահովվեց ԵԱՀԿ-ի միջազգային փորձագետների կողմից: ԵԱՀԿ փորձագետները մասնագիտական թրեյնինգներ անցկացրեցին 40 փորձարկու դպրոցի տնօրենի, 30 լուսավորական ռեսուրս-կենտրոնի աշխատակցի և 64 լիազորագրության փորձագետի: Նախարարության կողմից վարձակալված տեղական մարզիչների կողմից բազմալեզու կրթությունում (բիլինգվային/ մուլտիլինգվային ուսուցման մոդելներ, բիլինգվային ուսուցման ծրագրերի պատրաստում, բիլինգվային ուսուցման մեթոդիկա, բիլինգվային դասերի պլանավորում և անցկացում և այլն) շուրջ 400 ուսուցիչների մասնագիտական թրեյնինգներ անցկացվեց:</p>		2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	2.5	<p>Մասձավլեբելի» (Ուսուցիչ) ամսագրի հրատարակություն հայերեն և ադրբեջաներեն</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն</p>	2009-2014թթ..
իրականացում	<p>Ոչ վրացալեզու դպրոցների ուսուցիչների տեղեկատվության մատչելիության բարելավման նպատակով, 2009 թվականին ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնի և «Քաղաքացիական ինտեգրման և ազգամիջյան հարաբերությունների կենտրոն» ոչ կառավարական կազմակերպության կողմից ադրբեջանական և հայկական լեզուներով թարգմանվեց և բաժանվեց «Մասձավլեբելի» («Ուսուցիչ») ամսագրի առաջին և երկրորդ համարների 1290 օրինակ:</p>		2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	2.6	<p>Ուսուցչի օժանդակ ձեռնարկի“ (Երեք մասով) և այլ օժանդակ ռեսուրսների թարգմանություն հայերեն և ադրբեջաներեն</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, Ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն</p>	2009-2014թթ..

<p>իրականացում</p>	<p>2009 թվականին ադրբեջաներեն և հայերեն լեզուներով թարգմանվեց և բաժանվեց 1290 օրինակ «Սովորելու և զարգանալու տեսություններ» և «Ուսուցում և գնահատում» հրապարակումները: Նշված հրապարակումները ներկայացնում են ուսուցիչների օժանդակ ձեռնարկներ:</p> <p>2009 թվականին հայերեն և ադրբեջաներեն լեզուներով թարգմանվեցին ուսուցիչների մասնագիտական զարգացման չափորոշիչները, որոնց 900 օրինակ բաժանվեց ոչ վրացալեզու դպրոցներում և լուսավորական ռեսուրս-կենտրոններում:</p> <p>2009 թվականին ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնը մշակեց օժանդակ ձեռնարկ «Գործարար թղթերի ընթերցում և ստեղծում» Վրաստանի դպրոցների ոչ վրացալեզու հատվածների աշխատակիցների համար. նշված ձեռնարկը 2009 թվականին 500-ական տպաքանակով հրատարակվեց և տարածվեց:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
	<p>2.7</p>	<p>Նպատակային մասնագիտական թրեյնինգներ, ուսուցիչների և դպրոցի վարչության համար</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն</p>	<p>2009-2014թթ..</p>
<p>իրականացում</p>	<p>2009 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնը իրականացնում է 3 ծրագիր վերը նշված ուղղություններով.</p> <p>1. «Որակյալ վրաց լեզվի մասնագետները ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների դպրոցներում» ծրագիրը ներկայացնում է պետական ծրագիր, որը նախատեսում է ազգային փոքրամասնություններով խիտբնակեցված տարածաշրջանների համար արհեստավարժ վրաց լեզվի և գրականության ուսուցիչների ապահովում: Մրցույթի արդյունքում ընտրվեցին ուսուցիչներ, որոնք տիրապետում են տեղական բնակչության լեզուն և կարող են բարձր մակարդակով դասավանդել վրաց լեզու և գրականություն: Ծրագրի շրջանակներում ընտրված ուսուցիչներին նշանակվեց բարձր աշխատավարձ (ամսական 1000 լարի): 2009 թվականին, ծրագրի շրջանակներում 28 վրաց լեզվի ուսուցիչ ուղևորվեց Քվեմո Քարթլիի տարածաշրջան, իսկ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանն ապահովվեց 17 վրաց լեզվի ուսուցիչ գործուղում:</p> <p>2. «Սովորենք և սովորեցնենք վրացերեն» ծրագրի շրջանակներում ապահովվեց բոլոր ազգային փոքրամասնությունների վրաց լեզվի և գրականության ուսուցիչների թրեյնինգը և մասնագիտական զարգացումը:</p> <p>3. «Սովորեցրու Վրաստանի համար» ծրագիրը նախատեսում է որակյալ ուսուցիչների մեկնում Վրաստանի տարածաշրջաններ (բարձր լեռնային և հեռավոր գյուղեր): Նշված ծրագրի շրջանակներում կատարվեց 8 ուսուցիչ մեկնում Քվեմո Քարթլիի տարածաշրջանի դպրոցներ, իսկ 4 ուսուցիչների Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
<p>Խնդիր №3</p>				
<p>Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիության բարելավում</p>	<p>3.1</p>	<p>Բարձրագույն ուսումնական հաստատություններում նախապատրաստական-ինտեգրման դասընթացի հայեցակարգի մշակում, փորձարկում և արմատավորում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, քննությունների ազգային կենտրոն, բարձրագույն ուսումնական հաստատություններ</p>	<p>2009-2014թթ., Օրենսդրական փոփոխություններ և առաջին հերթափոխ 2009 թ.</p>

իրականացում	Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար բարձրագույն կրթության մատչելիությունը բարելավելու նպատակով, նախարարության կողմից ընթանում է աշխատանք օրենսդրական փոփոխությունների վրա:		2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	3.2	«Սոցիալական դրամաշնորհների ծրագիր» և այլ նպատակային ծրագրերի մշակում և արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009-2014թթ..
իրականացում	«Սոցիալական դրամաշնորհների» ծրագրի շրջանակներում» պետությունը ֆինանսավորում է այն ուսանողներին, ովքեր միջնակարգ կրթություն ստացել են Քվեմո Քարթլիի և Սամցխե-Ջավախեթիի ոչ վրացալեզու դպրոցներում: Յուրաքանչյուր տարածաշրջանից 2009-2010թթ.. ուսուճական տարում ֆինանսավորվելու է 30 ուսանող: 2009 թվականին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչները հնարավորություն ունեցան, 2009 թվականի դեկտեմբերը ներառյալ, համազգային քննությունների ժամանակ ընդհանուր ունակությունների թեստերը հանձնել իրենց մայրենի լեզվով: Այդ նպատակով ազգային քննությունների կենտրոնի կողմից ապահովվեց ընդհանուր ունակությունների թեստերի թարգմանություն հայերեն և ադրբեջաներեն լեզուներով: 2009 թվականին համազգային քննությունների համար նախապատրաստական նյութը (ժողովածուն) լույս տեսավ նաև ադրբեջաներեն և հայերեն լեզուներով: Նմանապես Ազգային քննությունների կենտրոնի կողմից անցկացվեցին բաց դռների օրեր Սամցխե-Ջավախեթի և Քվեմո Քարթլիի տարածաշրջաններում:		2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	3.3	Ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների առաքում արտասահման բակալավրային և մագիստրային ծրագրերով	Զարգացման և բարեփոխութների հիմնադրամ	2009-2014թթ..
իրականացում	Նախագահի կարգադրության համաձայն հիմնադրամի կողմից ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչ առաջադեմ ուսանողներին արտասահման ուսանելու ուղարկելու գործընթացը սկսվել է 2007 թվականից: Վերջին 3 տարիներին Ամերիկայում և Եվրոպայի առաջատար համալսարաններ են ուղարկվել բակալավրային ծրագրերով սովորելու շուրջ 15 ազգային փոքրամասնության ներկայացուցիչ առաջադեմ ուսանողներ. <ul style="list-style-type: none"> • 2007 թվականին ուսանում էր 7 ուսանող, • 2008 թվականին ավելացավ ևս 6 ուսանող, • իսկ 2009 թվականին ընդհանուր առմամբ ուսանում էր 12 ուսանող: Ներկայումս բակալավրիատում ուսումը շարունակում են ԱՄՆ-ում 9, իսկ Հունգարիայում 3 մեր ուղարկած ուսանողներ:			
Խնդիր №4				
Պետական լեզվի ուսուցման աջակցություն	4.1	Ոչ վրացալեզու դպրոցներում վրացերենի, որպես երկրորդ լեզվի, ուսուցման ծրագրի արմատավորում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ԵԱՀԿ	2009-2014թթ..

<p>իրականացում</p>	<p>2009 թվականին նախարարության կողմից ստեղծվեց վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի, առարկայական ծրագիր բոլոր տասներկու դասարանների համար: Հաստատվել են վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի, առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ դասարանների առարկայական ծրագրերը: Նմանապես ազգային ուսումնական պլանի համաձայն ստեղծվեց և գրիֆ շնորհվեց վրացերենի, որպես երկրորդ լեզու, դասագրքերին առաջինից չորրորդ դասարանների համար:</p> <p>Նախարարության «Ոչ վրացալեզու հատվածների աշակերտների դասագրքերի մատչելիությունը բարելավելու ենթածրագրի» շրջանակներում 2009 թվականին ապահովվեց բոլոր ոչ վրացալեզու դպրոցների և հատվածների 3-րդ դասարանների աշակերտների համար (ընդհանուր առմամբ 6024 աշակերտ) «Վրացերենը, որպես երկրորդ լեզու» դասագրքի բաժանումը:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
	<p>4.2</p>	<p>Վրաց լեզվի ձեռնարկների և ուսումնական ռեսուրսների ստեղծում և կատարելագործում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2009-2014թթ..</p>
<p>իրականացում</p>	<p>Նախարարության «Բազմալեզու ուսուցման աջակցության ծրագրի» շրջանակներում 2009 թվականին ապահովվեց բազմալեզու ուսուցման ծրագրերի նմուշների պատրաստումը ընդհանուր կրթության բոլոր աստիճանների համար: Նմանապես, ազգային ուսումնական պլանների և գնահատման կենտրոնի հետ համատեղ, մշակման գործընթացում են բազմալեզու կրթության դասագրքերը և լրացուցիչ ուսումնական նյութերը:</p> <p>Ազգային ուսումնական պլանի համաձայն ստեղծվեց և գրիֆ շնորհվեց վրացերենի՝ որպես երկրորդ լեզվի, դասագրքերին առաջինից չորրորդ դասարանների համար:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>	
	<p>4.3</p>	<p>Ոչ վրացալեզու դպրոցների վրաց լեզվի ուսուցիչների թրեյնինգ Սամցխե-Ջավախեթից և Քվեմո Քարթլիից (հատուկ մասնագիտական վաուչեր ուսուցիչների համար «Վրացերենը որպես հաղորդակցական լեզու» և «Վրացերենը որպես երկրորդ լեզու» սովորեցնելու համար)</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոն</p>	<p>2009-2014թթ.;; Արդեն մտել է վաուչերային ֆինանսավորման մեջ</p>
<p>իրականացում</p>	<p>Այս գործընթացը պլանավորվում է սկսել 2010 թվականից:</p>			
	<p>4.4</p>	<p>Արտադասարանական լուսավորական և քաղաքացիական ինտեգրմանը կողմնորոշված ծրագրերի և նախագծերի մշակում և իրականացում</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն</p>	<p>2009-2014թթ..</p>

<p>իրականացում</p>	<p>2009 թվականից Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը ընդգրկված է «Ապրենք միասին» միջազգային ծրագրի իրականացմանը: Ծրագրի կառավարումը ապահովում է Բրիտանիայի խորհուրդը Եվրախորհրդի օգնությամբ: Ծրագրի նպատակն է հանդուրժողականության և միջմշակութային երկխոսության աջակցություն Եվրոպայի մասշտաբով: Ծրագրի շրջանակներում պլանավորված է 27 երկրների ընդգրկում հանդուրժողականության, հավասարության, մշակութային բազմաբղետության, կրոնի, հակամարտությունների և տնտեսական արտագաղթի մասին անցկացված բանավեճերում: Ծրագրի շրջանակներում 2009 թվականին մշակվեցին ուսումնական ռեսուրսներ, 5 դասի պլան, որոնք անցկացվեցին Վրաստանի 30 դպրոցներում: Այդ թվում Քվեմո Քարթլիի դպրոցներում: 2009 թվականին «Փոքրամասնությունների լեզվի պաշտպանության ենթածրագրի» շրջանակներում ապահովվեց 11-րդ հանրային դպրոցի բազայի վրա գոյություն ունեցող օսական կիրակնօրյա դպրոցի ֆինանսավորումը: Օսական կիրակնօրյա դպրոցում աշակերտները հնարավորություն ունեցան սովորել օսական լեզուն, մշակույթը, պատմությունը, բանահյուսությունը, կովկասյան պարերը և երգերը:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>
	<p>4.5</p> <p>Դեռահասների և չափահասների համար պետական լեզվի տիրապետմանը օժանդակող ծրագրեր</p>	<p>Վրաստանի կրթության և գիտության նախարարություն , ոչ կառավարական կազմակերպությունների հետ գործընկերությամբ</p>	<p>2009-2014թթ..</p>
<p>իրականացում</p>	<p>2009 թվականին Ախալքալաքում և Նինոծմինդայում բացվեցին չափահասների կրթության կենտրոններ «Լեզվի տներ» ուսուցիչների, հանրային աստիճանավորների, զինվորականների, բժշկական և սոցիալական աշխատողների, փոքր բիզնեսում ընդգրկված մարդկանց և այլ սոցիալական խմբերի համար: 2009 թվականին ապահովվեց Նինոծմինդայի և Ախալքալաքի «Լեզվի տների» ֆինանսավորումը յուրաքանչյուր կենտրոնի համար 30 000 լարի: Նշված գումարը ծախսվեց Ախալքալաքի և Նինոծմինդայի «Լեզվի տների» անձնակազմի աշխատանքի վարձատրության, ընթացիկ կոմունալ և այլ անհրաժեշտ ծախսերը ապահովելու, դիտողականություններ, գրքեր, ուսումնական նյութեր, գրենական նյութեր հայթայթելու վրա: Այսօրվա դրությամբ յուրաքանչյուր կենտրոնում ուսուցում է ընթանում 6 խմբերում :</p> <p>Բացի Ախալքալաքի և Նինոծմինդայի լեզվի տներից, 2009 թվականին վրաց լեզվի ծրագրի շրջանակներում Դմանիսի և Բոլնիսի մունիցիպալիտետներում (Դմանիսի 3-րդ դպրոցի և Բոլնիսի լուսավորական ռեսուրս-կենտրոնի բազայի վրա) բացվեցին վրաց լեզվի ուսումնական կենտրոններ: Ծրագրի շրջանակներում և ԱՄՆ-ի միջազգային զարգացման գործակալության օգնությամբ ապահովվեց կենտրոնների սարքավորումը համապատասխան գույքով, գրքերով, դիտողականություններով, աուդիո-տեսա տեխնիկայով: Նմանապես յուրաքանչյուր կենտրոնի համար ապահովվեց 2 վրաց լեզվի ուսուցչի վարձակալում, որոնց կողմից կկատարվի կենտրոնի ունկնդիրների խմբերի հավաքագրում և նրանց համար վրաց լեզվի դասերի անցկացում:</p>		<p>2009 թվականի դեկտեմբերը ներառյալ</p>

	4.6 Վրաց լեզվի ուսուցիչներին տարածաշրջաններում գրավելու համար միջոցառումների պլանավորում և իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009թ
իրականացում	<p>2009 թվականին Վրաստանի կրթության և գիտության նախարարությունը և ուսուցիչների մասնագիտական զարգացման կենտրոնը իրականացնում են 3 ծրագիր վերը նշված ուղղություններով.</p> <p>1) «Որակյալ վրաց լեզվի մասնագետներ» ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների դպրոցներում» ծրագիրը ներկայացնում է պետական ծրագիր, որը նախատեսում է ազգային փոքրամասնություններով հոծ բնակեցված տարածաշրջանների համար արհեստավարժ վրաց լեզվի և գրականության ուսուցիչների գրավում: Մրցույթի արդյունքում ընտրվեցին ուսուցիչներ, որոնք տիրապետում են տեղական բնակչության լեզուն և կարող են բարձր մակարդակով դասավանդել վրաց լեզու և գրականություն: Ծրագրի շրջանակներում ընտրված ուսուցիչներին նշանակվեց բարձր աշխատավարձ (1000 լարի ամսական): 2009 թվականին, ծրագրի շրջանակներում 28 վրաց լեզվի ուսուցիչ ուղևորվեց Քվեմո Քարթլիի տարածաշրջան, իսկ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանն ապահովվեց 17 վրաց լեզվի ուսուցիչ գործուղում:</p> <p>2) «Սովորենք և սովորեցնենք վրացերեն» ծրագրի շրջանակներում, ապահովվեց բոլոր ազգային փոքրամասնությունների վրաց լեզվի և գրականության ուսուցիչների թրեյնինգ և մասնագիտական զարգացում:</p> <p>3) «Սովորեցրու հանուն Վրաստանի» ծրագիրը նախատեսում է որակյալ ուսուցիչների գործուղում Վրաստանի տարածաշրջաններ (բարձր լեռնային և խառը գյուղեր):</p> <p>Նշված ծրագրի շրջանակներում կատարվեց 8 ուսուցիչների ուղևորում Քվեմո Քարթլիի տարածաշրջանի դպրոցներ, իսկ 4 ուսուցիչ Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջան:</p>	2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	
	4.7 Վրաց լեզվի ուսուճառության համակարգչային և ինտերնետային ծրագրեր, պորտալ, լուսավորական խաղեր	Վրաստանի կրթության և գիտության նախարարություն	2009թ
իրականացում	Վրաստանի կրթության և գիտության նախարարության վրաց լեզվի վարչության կողմից պատրաստվեց նոր վրացական կայք-էջի կառուցվածք և կոնտենտ: Ապագայում այս կայք-էջի վրա տեղադրվելու են վրաց-հայկական, վրաց-ադրբեջանական, վրաց-օսական գրուցարաններ, երկլեզու կրթության համառոտ բառարան, գործող լեզվի դասագիրքը հանրային աստիճանավորների համար և վրաց լեզվի ուսուցման տարբեր նյութեր:	2009 թվականի դեկտեմբերը ներառյալ	

ՄԵԴԻԱ ԵՎ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Խնդիր №1	Ծրագրի անվանում/միջոցառում		Իրականացնող կազմակերպություն/ գործընկեր	Իրականացման ժամկետներ
Ազգային Փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջաններում ազգային հաղորդման մատչելիության ապահովում	Հանրային հեռարձակման տարածման համակարգի վերակենդանացում		Հանրային հեռարձակում	2009-2014թթ..
իրականացում	Վրաստանի հեռուստատարածքում նոր ռուսալեզու ալիք է ստեղծվում, որի նպատակն է Վրաստանի, կովկասյան տարածաշրջանի և աշխարհի ռուսալեզու լսարանին մատուցել օբյեկտիվ լրատվություն տարածաշրջանում զարգացող իրադարձությունների, այստեղ բնակվող ժողովուրդների մշակութային ժառանգության, խաղաղ համակեցության, զարգացման գալիք հեռանկարների մասին Կովկասում խաղաղությանը և զարգացմանը աջակցելու նպատակով:			2009 թվականի դեկտեմբերը ներառյալ
Խնդիր №2				
Ազգային փոքրամասնությունների լեզուներով հեռարձակվող ծրագրերի մատչելիության ապահովում	2.1	Հեռուստատեսային լրատվական ծրագրեր	Հանրային հեռարձակում	2009-2014թթ..
	2.1.1	«Մոամբե» արխիվներն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)		
իրականացում	Արխիվներն «Մոամբե» հաղորդումը եթեր էր հեռարձակվում 26 րոպեանոց խրոնոմետրաժով: Հաղորդման առաջին մասը լրատվական բնույթի էր, որը արտացոլում էր Վրաստանում զարգացող սոցիալ-տնտեսական երևույթները (խրոն- 10 րոպե), իսկ երկրորդ մասը կազմված էր մի քանի հաղորդաշարերից, հիմնականում՝ սոցիալ-լուսավորական բնույթի հիմնախնդիր, տարածաշրջան, ժողովրդի ձայն, հայտնի մարդիկ, երիտասարդներ:			2009 թվականի դեկտեմբերը ներառյալ
	2.1.2	«Մոամբե» օսերեն (պարբերականություն. շաբաթական մեկ անգամ)		
